


Էեռնն Բ կայսեր առաջին տարին, այն է 474ին կարելի է որ թարգմանուած ըլլայ՝ փոքր թարգմանիչներէն միոյն ձեռքով: Յի-  
րուսի, —բաց ի յունարանութիւններէն — կան  
ասոր մէջ՝ նաեւ անծանօթ բառեր և ասու-  
թիւններ, որոնք մեզ համար օտար կ'երեւին  
դասական լեզուէն. օրինակ իմն, «խղճաւոր,  
համագոհոտրիան», և այլն, որք յետոյ իսկ  
ներմուծուած կրնան լինել, վասն զի ասոնց  
ճիշդ ձեւերն եւս կան ուղղագիտա, համագոտ-  
րիան, և այլ բառեր և բացատրութիւններ:  
Ստոյգ է և այս, որ այսպիսի երեւոյթներ  
կը տեսնուին յաճախ նոյն իսկ Աղեքսանդրի  
պատմութեան, փիլիսոփ, և Դասիթ Անյաղթի  
Վերլուծութեանց և այլ թարգմանութիւն-  
ներու մէջ. բայց այս բնել չէ, թէ այդ  
թարգմանութեանց հեղինակներն՝ անծանօթ  
էին հայերէն լեզուի առանձնայատկութեանց,  
վասն զի ինքնագիր երկասիրութեանց մէջ՝  
հակառակն այլ ցոյց տուած են. այսպէս է  
և Մեթ Սոկրատայ թարգմանիչն: Բայց նա  
հանդերձ իւր յունարանութեամբը՝ ունի նա և  
համառօտողէն աւելի դասական լեզուի և շա-  
րագրութեան անբաւ առաւելութիւններ: Մա-  
նուանդ թէ ես վստահ եմ, որ այդ օրինակն, —  
եթէ հրատարակուի ամբողջպէս և խնամքով,  
— պիտի կարենայ ուղղել նաեւ Սոկրատայ  
պատմութեան յոյն բնագրի մէջ սպրդուած  
լրիպակներն և անորոշութիւնքը: Կը յուանը  
թէ իմանալով ձեռագրիս մեծ կարեւորութիւնը,  
Երուսաղեմի Ս. Յակոբայ վանից միաբան-  
ներն, և ի մասնաւորի Սահակ Ե պիսիոպոս  
Խապայեան, ամէն փոյթ պիտի տանին վե-  
րայայանել զայն և ի լոյս բծայել, մատու-  
ցանելու համար գիտնական աշխարհին այն  
մեծ ծառայութիւնը, զոր անձկանօք կը սպա-  
սէ իրմէ: Կը յուանը նաեւ Տէր-Մովսի-  
սեանէն, թէ արամաղիք է այժմ՝ ընդունե-  
լու, որ կարող եղանք այգու ուրիշ կարծիք  
յայտանել:

Հ. Բ. Մարգիսեան



### ՀԵՂԻՆԱԿ ԱՂՈՒՆԵՆԻԾ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ



**Ա**նր ազգային պատմութեանց հի-  
մքերէն և նշանաւորներէն մէկն է  
Աղուանից Պատմութիւն կոչուածն,  
և կըրնայ եւս շատ նշանաւոր ըստիլ՝  
այդ մեր զրացի և սակաւածանօթ ազ-  
գին միակ յատուկ պատմութիւնն ըլլալով, և  
անկէ աւելի հետաքննելի՝ տեղեկութեամբն,  
անոր սահմաններէն և լեքանց պահակէն  
(Ճորայ կամ Դարբանդայ) այնպիսի հի-  
ստային ազգաց վրայօք, որոց գլխաւորն են  
Հոնք, նախահարք և կարապետք Թաթա-  
բաց: Մեր այժմու բանասերք՝ Զանազոզք  
հրատարակելու 'ր է և ազգային պատմիչ,  
չկին կըրնար անտիպ թողուլ զայս. և արդէն  
երկու անգամ սպազորուած է, այլ ոչ ար-  
ժանաւոր ծանօթութեամբն. նա և ուուարան  
թարգմանուած (ի Պատկանեանէ) և ասպա-  
զրուած (ի 1864). այլ և օրագրաց մէջ քիչ  
շատ տեղեկութեամբն յիշուած է. ինչպէս ի  
նորումս՝ սոյն իսկ մեր ամսագրիս այս տա-  
րուան՝ օգոստոս ամսոյ պրակին մէջ: Դարա-  
ձեալ, զրեթէ այս օրերումս՝ նոր բանասեր  
մի, Ախաջիտիեցի Պր. Յակոպ Մանուկեան,  
Ենայի համալսարանէն իրեն փիլիսոփայու-  
թեան ուսմանց վարդապետութեան աստի-  
ճան ընդունելու համար, ընտրեք, ճտեր և  
հրատարակեք է գերմաներէն (ի Լիբսիս) ծա-  
նօթութիւն մի այս Աղուանից Պատմութեան  
և հեղինակին վրայօք, բաւական յաղողու-  
թեամբ. և իբրեւ յաւելուած՝ Աղուանից քրիս-  
տոնէութեան պատմութիւնն, և Հոնաց ար-  
շաւանաց և կրօնից վերաբերեալ մասերն այլ  
թարգմանելով, որք հարկաւ շատ հաճոյ պի-  
տի ըլլան արեւմտեան բանասիրաց:

Մեր նպատակն այս յօդուածիս մէջ՝ չէ,  
ոչ մինչև հիմայ յիշածներու և ոչ Մա-  
նուկեանի զրուածին քննադատութիւն. այլ  
միայն ծանօթութիւն մի՝ Աղուանից Պատ-

մութեան հեղինակին, որ 700 տարիէ է վեր հասարակօրէն ծանուցուած և ի յետագայ պատմընաց մկայուած՝ Մովսէս կարաւտուացիս՝ և և չէ. և այս էի չէի համար է բնելիքս: Մեր Պատմիչը լաւ սովորութիւն մի ըրած են, ի սկզբան իրենց պատմագրութեան՝ իրենցմէ առաջ պատմագրաց անունները յիշելու. կերպով մի այսպէս ըրած են խորհնացիքն և Փարսպեցիքն իսկ. բայց աւելի եւս յետագայ դարուց պատմիչը, երբ շարուանակարար աւելցեք են հեղինակը: Այսպէս ըրած է նախ Մտեփանոս Ասողիկ՝ ի վերջ ժ դարու, իրմէ տրած ինն պատմիչ յիշելով, որոց մէջ շկաց Աղուանից պատմիչն, վասն զի հազիւ թէ ձեւացած էր այն Պատմութիւնն և դեռ չէր ծաւալած. իրմէ վերջը հինգ կամ վեց պատմիչը և պատմագրաց անունները ցանկոցը՝ յիշեն մեր խնդրած հեղինակը. և նախ՝ Մխիթար Անեցի՝ ի վերջ ժի դարու, որ առանց անուան հեղինակին՝ Պատմագրիւն Աղուանից կ'ըսէ, և իր համբած էժ. պատմընաց կարդիս՝ զառ զքնէ ընդ մէջ Մեթիոսի՝ որ յ'է դարու և Ղեւոնդի՝ որ յ'ը դարու. և նշանական է այստ իրմէ վերջ նշանաւոր պատմիչ և 22 պատմիչս յիշող՝ և կ'իրակոս, որ յանուանէ Մովսէս կարակաւտուացի կոչէ, և պատշաճապէս կարգէ ընդ մէջ Յովհ. կաթողիկոսի և Ռիփտանեոսի ու Ասողկան կամ Ասողիկան: կիրակոսէն թիչ վերջ մանրաքնին գրող Մխ. Այրիվանեցիքն (ժԳ դարուն վերջերը) աւելի քան 40 պատմիչ համբէ, իրմով հանդերձ, թիչ մի շփոթ կարգաւ, զթոմաս Արծրունի դնելով նախ քան մեր Ե դարու նանչցած պատմիչները, յորոց յետ Եղիշէի՝ դնէ զՇապուհ բազրատունի, ապա զՄովսէս Աղուանեցի, յետոյ զՂեւոնդ երէց. սակայն վերջը ի ժամանակագրութեանն՝ ճշգրտապէս մեր խնդրած պատմիչը դնէ Հայոց Նև և Նոթ թուականաց միջում, իրքեւ Քրիստոսի 980 և 1000 թուականը, և կ'ըսէ. «Աստ Աղուանից պատմիչ Մովսէս կարակաւտուացի» իրմէ շատ վերջ և իրմէ առած կ'երեւի (յ'ժՎ դարու) Ղազար Զահկեցի կաթողիկոս, որ 35 պատմիչ կ'անուանէ, և անոր նման՝ յետ Յովհ. կաթողիկոսի և յառաջ քան զՌիփտանէ և զԱսողիկ՝ դնէ զՄովսէս

Մովսէս կարակաւտուացի՝ Աղուանից պատմիչս Ռիփշ մէկ անանուն մի՝ որ միայն պատմընաց անունները զրած է, 26 թուով, որոց մէջ քանի մի հետաքրքրականը, և անոնցմէ զառ 36 Պատմագիրը Հայոց այլ կան, կ'ըսէ, «զորոց զանուանս չգիտեմ, և ընդ ամենայն՝ « Պատմագիրը 62 »: Սա եւս նման Այրիվանեցւոյն և Զահկեցւոյն՝ ընդ մէջ Յովհ. կաթողիկոսի և Ասողկան կարգէ՝ Մովսէս կարակաւտուացի:

Այսչափ յիշատակներէն յայտնուի անտարակոյս, որ Աղուանից պատմիչն՝ ժ դարուն վերջերը զրած է: Սակայն մէկ քանի ցանկոցաց՝ կամ յանուանէ հեղինակին կամ լոկ պատմիչ և Պատմութիւն Աղուանից կոչելով, յառաջ քան զՅովհ. կաթողիկոս և զՂեւոնդ և յետ Մեթիոսի դնելն զնա, վերացընէ մինչև յ'է դարս Այս էր և մեր քառմն է և չէ: Պատմութիւնը կարգացողը և ծանոթարարը, նոյն և նոր գրողն Մանանդեան, վկայեն, որ յիշեալ (է) դարու վերաբերեալ դիպուածոց մէջ՝ պատմիչն իրքեւ ժամանակակից և ներկայ ցուցընէ զինքն, նա և տեղ մի (զիրը Բ, գլ. ԺԱ) ի յիշելն զկարգանկատուը զիւլ՝ յառաջին կէս է դարու, իբր փակագծելով կ'ըսէ. « յորմէ և Ես » այսինքն, Ես այլ այս զեղէն եմ: Բնական հետեւանը է, որ ուրեմն ինքն այն ժամանակին էր (յէ դարում): Ոմանը կարծեն, թերեւ և մեր նոր երիտասարդ քննաբանն, թէ այն ծանօթութիւնն մուծած ըլլայ ժ դարու հեղինակն, իբր թէ է դարու յիշատակներն այլ ինքն զրած ըլլայ, հին աղբիւրներէ առած և իր ոճով ձեւացուցած. սակայն նոյն իսկ շարադրութիւն բանիցն և լեզուն՝ վկայեն հայագիտաց՝ զՇնութիւնն: Ոչ այդ կարգանկատուացիքն միայն, այլ և իրմէ կէս դարէ աւելի հին յիշատակագիր մ'այլ՝ յայտնուի այդ պատմագրութեան մէջ (զիրը Բ, գլ. 2), որ է Արիստեկ կամ Անդրիստեկ, վեհակի Տեսչան պատմագրութեան վերջը, զոր ինքն զրեք թերթիքներուց Արատ կաթողիկոսին օրով, 2 դարու երկրորդ կիսում: Հետեւի առկէ, ինչպէս արգէն քննողը վկայած են, որ այլեւ այլ գրչաց յիշատակը կան յԱղուանից պատմութեան մանաւանդ յ'Բ դարս, զորս հա-

աբերք է Մովսէս ի Թ դարու, և անոնցմէ վերջի դարուց գրողաց յիշատակներէն այլ քաղելով՝ Ա և Գ գրոց մեծ մասն ինքն է գաղափարքեր կամ գրքեր, և ձեւացուցեր է այդ Աղոսանից պատմութիւնը. իր յիշած իշխանաց և կաթողիկոսաց շարքն այլ՝ անտարակոյտ հաստատեն Ալլիքիանեցւոյն ցուցած ժամանակը, 980է և 1000է միջոց. Աւելցրենեք, որ Ռւստամէս, զոր պատմիչաց կարգին մէջ տեսանք անմիջապէս Մովսէսէն առաջ կամ ջովը, և յայտնապէս իրեն ժամանակակից է, Թ դարու վերջին քառօրդին, եթէ անոր գրածը տեսած է և թէ չէ, մէկէ առեւի Աղուանից պատմութիւն գրող ճանչնայ, Ըլլայ երկուսն գրող Ըլլայ կարճ. իր ի սկզբան Կն գլխոյ Բ գրոց կ'ըսէ. « Լսելով (կամ « առեւով) զայս մեր պատմագրացն Աղոսան և Կնից ... զառաջին հաստատարն (ի Գրիստոս) » և աշխարհին իրենակց » :

Հիմայ կըրնայ խնդրիլ, թէ, եթէ այլ եւ այլ հիւն մասնագիրք եղած են այդ պատմութեանն, կարելի է իրրեւ զլիսաւոր պատմիչ անուննել, կամ գոնէ երկուք, զկայսպնկառուացիս՝ որ իր անունը չի յիշեր, և զՄովսէս՝ որ իր մականունը չի յիշեր, մասնական թէ կոս պահտի իր պատմութեանն (անշուշտ գրած է պարսէ) յիշատակը, յորում հասանօրին իր անձին և տեղւոյն վրայ առելի ծանօթութիւն տուած կ'ըլլար, քան ինչ որ կայ ի յատաշարանի գրոցն, առ Անանիա Նաբեկացի ուղղած « Գրածեալ. եթէ այլեւայլ յիշատակագիրք եղած են, ինչո՞ւ ոչ ուրիշ մի՝ այլ միայն կաղանկատուացին կոչուած է պատմիչս — Համառոտ պատասխանեմք մեր հաւանութիւնը, թէ այդ Կաղանկատուացիդ՝ ուրիշներէն առեւի մասն և առելի հետաքրքրական բաներ գրած է, անոր համար կոչուած պիտի Ըլլայ Աղոսանից պատմիչ, և իր հայրենեաց անուամբ՝ յետագոյ պատմահաւաքն այլ՝ իր ժամանակն յայտնուի պատմածն, Կ դարու առաջին կիսուն. Աղուանից կաթողիկոսութեան վերջին արժողական և մեր ժամանակակից՝ Եսայի Հասան—Չալալեան, այդ պատմութեան իր օրինակին մէջ՝ ի ցանկի զլիսագրութեանց չըրտ անգամ գրած է, թէ այդ հեղինակն իր

պատմութիւնը գրած է ի ՀԴ Թուին Հայոց, որ է 625 Գրիստոսի. բայց քանի մի տարի ալ կըրնայ առելցուիլ վրացն, Նոյն հոգեւոր տէրն (Հասան—Չալալեան) հմուտ իր Հայրենեաց տեղեաց՝ նշանակած է եւս որ հիւն կապակատարն հիմայ կոչուէր Պարտուկաբաղ. իր հայրենակցաց թողումը քննել զայս և յայտնել մեզ, հին Պարտու (Պերտէ) քաղաքի սահմանեղումս :

Յետ հաւանելու որ Աղոսանից պատմութեան հիւն յիշատակագիրն կամ մեծամասն գրողն է Կաղանկատուացի մի, գուցէ յետին հասարակոյն նման՝ Մովսէս անուամբ (և զոցէ ոչ), որով երկուքին անուանքն և գործքն այլ իրարու խառնուին և շփոթուին ու շփոթեն այդ պատմութիւնը յիշողները, սկսեալ ի Ալիբալուէ, (ինչպէս ուրիշ համանուն Մովսէսներ ալ շփոթուած են ընդ խորենացոյ իրեն մօտ կամ քիչ նոսր ժամանակաւ). մնայ հարցնել, թէ արդեօք անձանց աւնուան հետ՝ կըրնան նոյն Ըլլայ և Հայրենիքն. այսինքն, պատմահաւաք Աղուանեցին այլ՝ կաղանկատուացի է. — Այս հաւանական շէր երեսեր. բայց առանց երկարաբանելու բանեք՝ թէ չէ. վասն զի մեր վերոյիշեալ պատմագիրքը հեղինակներէ հնագոյն անձինք և գրեթէ տեղացիք, նա և հմտագոյն և վայելչագոյն գրիչք (թէ ոչ սովեղնք՝ այլ արծաթափայլք), որոշակի նշանակած են գրած հայրենիքը. Գոցա մին է Ալիբալուէ վարպետն, Մեծ Վարդապետն Վանական, որ իբրեւ հիւն Պիլիթեան կամ Ապողոնեան հարցուկ և պատգամախօս՝ երկու բարեւ հարցան է պատասխանէ, ով է « Աղուանից Պատմաւագիր. — Մովսէս, և գեղջն՝ Գասխտրէն » :

Այդ գեղին անուան մէջ (Ա) զիր մ'այլ առելցրելով՝ քիչ մ'այլ առելի տեղեկութիւն կու տայ հեղինակին վրայ՝ Վանական մեծագոյն և իրեն վարպետ և առաջին յետուանէ յիշող զպատմիչն՝ Միսիքար Գոշ, իր մէկ համառոտ և անկատար գրածով մէջ. « Պատմութեանն Մովսէսի Գասխտրէնց » և Վ, որ գրովանդակ պատմէ զՏանու Արտանից » (պատմութիւն) : Բովանդակ Ըսելով՝ կ'մտայքնէ՝ թէ նա է ամբողջ պատմութեան հաւաքողն, և թէ իբրմէ առաջ ու

ընդեր այլ Աղուանից վրայօք պատմութիւն գրած են : Իսկ ինքն Մխիթար ուզեր է շարունակել Մովսիսի գրածը, անկէ ետքի յիշատակողներէն, և իր օրերուն Հանդիպած. ներովը : Աղուանից կաթողիկոսաց շարքն այլ կու շարունակէ այն տեղէն կամ անձէն՝ ուր Գառնուրանցիին դադրեցընէ, իբրև յա. մին 1000 : Բայց Գոշի գրածն պակաս մնայ մեզի յայտնուած և գրեթէ անտարակոյս իւր իսկագիր օրինակին մէջ . որուն Հանդիպելով մենք՝ զմեզ աւելի բաղդատը Համարիմք բան զկիրակոս և զմանսինս . որոց՝ վարպետաց գրածներէն ինչ ինչ՝ և իրենցմէ յետնոց եւս անծանօթ մնացեր է Հինգ վեց դար : Եւ անշուշտ այս շատերու անծանօթ մնալու պատճառան է, որ իբր 250 տարի յետ Հեղինակին գրութեանն՝ վառական վ. վե. բոլիշեալ Հարցումն ըրեր և պատասխանը տուեր է, և կու տայ մեր այման Հետաքնին բանասիրաց :

մուծուեցաւ անոր գրոց մէջ՝ Բայց գործը յայնմ է, որ եթէ այս ենթադրութիւնը ըն. գունինք, հարկ պիտի ըլլայ մերժել՝ իբրև ներմուծեալ խորենացոյն պատմութեան ամ. բողջ առաջին գիրքը, քանի որ անոր վրայօք ալ ամենեւին յիշատակութիւն չկայ Ասողկայ մօտ :

Երկրորդ քննադատն՝ կարծիք յայտնեց — ասկայն առանց ապացուցի, — թէ խորե. նացին, հուսաստանէն ինչպէս և հեղինակն վարուց ս. Սեղբեստրոսի, կրնային իրարմէ անկախ օգտօտիչ հասարակաց աղբերէ մի՞ :

Վերջապէս, Վենետիկոյ Մխիթարեանց քննադատին ընդարձակ յօդուածն ալ լոյս տեսաւ . որուն ուղ և ծածկ, մի միայն նա. խընթաց քննադատին դիտողութեան բարդա. ւածութիւնն է, ի մէջ բերելով սակայն իւր կողմանէ այն հասարակաց աղբիւրը, որպիսի էր՝ ըստ իւր կարծեաց . Μαρτύριον τοῦ ἀγίου καὶ ἐυδόξου ἀθλοφόρου Ἐδουαίου<sup>3</sup>, որ յօդուածի հեղինակին անելով Գ՞Ե գա. բու. կը վերաբերի : Կայ նա և այդ յիշա. տակարանի հայերէն թարգմանութիւնն, որ կը բովանդակէ իւր մէջ զ« Պատմոսքիւն Կոս. տանդիակնսի քաղաքոսի և մօրն նորա Հեղի. նեայ », որ վերջերք ս. Սեղբեստրոսի վա. բուց հայ թարգմանութեան մէջ մուծուեր է : Հեղինակին եղբակցութեամբ այդ յիշատա. կարանի թարգմանութիւնն խորենացիէն շատ վերջ կատարուած է, այսինքն, ժ. — ժԱ գա. բուն մէջ և արգէն անկէց վերջը կցուեր է ի սկիզբն եկեղեցական պատմութեան (Փ.) Սոկրատայ, ինչպէս որ կը տեսնենք զայդ ի ձեռագիրս : Իսկ գալով խորենացոյն փո. խառութեան ի Սոկրատայ, զոր դիտել կու

**ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ**

**ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՊ**

Ի ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ Մ. ԽՈՐԵՆԱՑԻՈՑ

ՆՆՐԱՅՈՒԹԻՒՆ

(Յար. և վերջ, տես յէջ 97)

**Ք**ՆՆԱՎԱՏՆԵՐԷ մին, որ սկսաւ գրել անմիջապէս յետ լոյս տեսնելու փրանկ հայա. գիտին (Աղ. Կարբիբերի) առաջին յօդուածոյն, զոր տեղ ջանացաւ մերժել իրականութիւնը՝ Մովսիսի ի վարուց ս. Սեղբեստրոսի ըրած փո. խառութեան, ենթադրելով վերջիշեալ տեղն իբր մի ներմուծումն ի « Պատմութեան Հայոց », այսինքն, թէ նորա Բ գրոց 83-րդ գլուխն, ինչպէս զայդ կարելի է իմանալ Ասողիկէն, — որ ժԱ կարու մատենագիր է և քայլ առ քայլ հետեւող խորենացոյն, — իսկզբանէ Մովսիսի չէր պատկանէր, այլ յետոյ ուրեմն

1. Մուրն, հայ ամսագիրք հրատ. Ի Տփղիս. յօդուած Ս. Մալխասեանի, 1892, թիւ 12 :  
 2. Հանդէս Ամսօրնայ հրատ. Ի Վեննա, յօդուած Սոք. վարդապետ Պարոնեանի, 1892, թ. 11 :  
 3. Այդ յիշատակարանի քնադէրն կը գտնուի վատիկանի գրատան մէջ, Ի թ. 866, թերթ 356, իսկ նորա հայ թարգմանութիւնն՝ Վե. նետիկոյ Մխիթարեանց Մատենադարանի Յայա. մաւուրաց միոյն մէջ, որ 1441 թուականին գրուած է (թ. 279) :